

ւարը: Վեց հարիւր տարուայ բռնակալ լուծը կը ճարճատէր, մոխիրի կը վերածուէր:

— Իէպի բանտ, դէպի պետական հաստատութիւնները, վառելի վանի Բաստիլը, Ձէվտէթի պաշտօնական որջը:

Շրջանապետները երկու թեւով առաջացան. մէկը՝ դէպի բանտ ու կառավարչատուն եւ միւսը՝ դէպի Ազիլիէ զօրնոցը:

Առաջին խումբը մտաւ Վանի Քաղաքապետարանը, ու դահլիճէն իսկ հրդեհեց: Ապա աջտեղէն երկու մասի բաժնուելով՝ մէկը առաջացաւ դէպի կեդր. բանտ եւ միւսը վիլայէթի կառավարչատուն, նահանգային ոստիկանատուն եւ հեծելազօրաց գչլան: Առանց շէնքերէն ներս մտնելու՝ դուռներէն եւ սանդուխներէն կրակի տրուեցան իրենց ամբողջ զոյքերով, իրենց ամբողջ հարստութեամբ: Նոյն վիճակին ենթարկուեցան Սուլթանիէ մէկիթէպը եւ Նիգահէթ խանէն (առողջապահական շէնք) եւ պետական բոլոր հաստատութիւնները:

Երկրորդ խումբը մտաւ Ազիլիէ մեծ զօրանոցը, Փրզայի բաժանմունքը եւ գրաւեց կառավարական ցորենի շտեմարանը, որ իր մէջ կը պարունակէր 5000 չափ ցորեն (20,000), 1500 լիտր ալիւր (մօտ 700 փութ):

Գրաւուեցան հետզհետէ երկրագործական տեսչութեան պահեստը, Ռէժիի աղի ամբարները:

Դեռ կը մնար Վանի բերդը: Կէս զիշերը անցել էր, մօտ էր աղօթարանը...

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՆՈՅՍ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԱՌԱՒՕՏ (ՄԱՅԻՍ 4)

Յաղթանակի արբեցումը ընդհանուր եւ գլխիւն էր:

Ամբողջ Քաղաքամէջը մեր ձեռքն էր: Հրդեհումներու ծուխի եւ բոցի մէջ 1915-ի Մայիս 4-ի արշալոյսը Վարազի կատարներէն իր ճօղերը կը բանար, լուսաւորելու համար Արտոսէն Միփան, Վարազէն Գրգուռ, ողջունելու համար Վասպուրականցիներու փայլուն յաղթանակը:

Դեռ Վանի քարաժայռը կը մնար լուռ ու սգաւոր: Անհաղորդ մեր ցնծութեան՝ ան կը մնար յամր ու մռայլ: Դեռ մթնշաղ, Դանիէլ

վրդ-ի հետ անցանք Շչիլոյեանի դիրքը, ուր մեզ հետ վերցնելով խումբ մը զինուորներ՝ այդ կողմէն յառաջացանք դէպի բերդը: Արթուն հետախուզութեամբ բարձրացանք կատարը, պարխապներու ճամբու վրայ: Թշնամիէն ոչ ոք. ահադին կոյտերով վառուած փամփուշտներու դէղեր ամէն դիրքի մէջ: Կանգ առինք, շուրջներնիս դիտելու: Անյագօրէն ծծեցինք լոյսով ողողուած օդը, շնչեցինք խոր թոքերով գարնան պաղ զեփիւռը, որուն ամբողջ 30 օր կարօտով տոչորուած կը մնայինք:

— Հասի՛ր, վարդապետ, մեր տառապանքը վերջ գտաւ. նայի՛ր տես, ինչպէ՛ս կը փախչին, նայի՛ր Այգեստանի կողմը...

— Ես քարացած եմ, — ըսաւ Դանիէլ վրդ-ը. — ոչինչ չեմ գտար, սպասի՛ր, քիչ շունչ առնենք, գուցէ սթափուինք...

Արեգակը Աստղղկան կատարէն ճիւղ կ'ընէր դուրս թուշիլ: Համատարած սեւ թանձր ծուխը ծառացած կը մնար ամբողջ Այգեստանի վրայ, կարծես խճճուած ծառ ու ճիւղի մէջ բարձրանալ չէր կարող: Հեռուն հարաւային դաշտերով կը փախչէին յետ մնացած թուրքերը, ձիաւոր ու հետեւակ: Արեւմուտքէն ծովը կը ծփծփար: Իր մակերեսին չողացող հինգ նաւերը՝ փախստական թուրքերով բեռնաւորուած, ճերմակ առաքաստներով խոյս կուտային:

Իսկ մենք, բերդի արեւելեան մասը գրաւած, հմայուած մնացեր էինք: Ամէն բան նոր. կեանքը նոր, վայրկեանը նոր, ո՞ր մէկը դիտես, ո՞ր մէկին ուշադրութիւն ընես: Բոպէ մըն էր այդ, զոր միմիայն տեսնել, ապրել, զգալ կրցանք, բայց արտայայտել անկարելի էր...

Հրացաններու գոռոցներով միայն մենք ողջունեցինք յաղթանակը, եւ առաջացանք բերդի կեդրոնական կառավարական մասը, որ այլեւս մեր ձեռքն էր:

Այս միջոցին Հայկավանքի ուղղութեամբ լսեցինք երգի ձայներ: Հասկցանք, որ Այգեստանէն մեր հերոսներն են եկողները. Անմիջապէս հրահանգեցինք մեզ հետ եղող զինուորներուն մնալ բերդը, իսկ մենք դիմաւորելու համար զէնքի ընկերներուն՝ վար իջանք, միատեղ կրկին բարձրանալու: